## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՇՄԳԼԲԿ- ՇՀԱՊՁԲ-15/1 -16/1/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի ԳԱԿ –ի հետ կնքած մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկների բացման գնահատող հանձնաժողովի նիստի

Ք. Գյումրի,Սարուխանյան 1 <<27>> հուլիսի 2016թ.

ժամը՝ $11^{00}$

Պատվիրատուի անվանումը <<Գյումրու Վ.Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն>>ՓԲԸ

Գտնվելու վայրը ք.Գյումրի , Սարուխանյան 1

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ Սարգիս Կարապետյան
/անուն, ազգանուն/

Հանձնաժողովի անդամներ՝ Ռուզան Մովսիսյան
/անուն, ազգանուն/

Լիլիթ Հովհաննիսյան
/անուն, ազգանուն/

Հանձնաժողովի քարտուղար՝ Թամարա Գաբրիելյան
/անուն, ազգանուն/

### 1. ՇՀ միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման մասին

----------------------------------Սարգիս Կարապետյան ---------------------------------------------

(նախագահի անուն, ազգանուն)

1.Ընդունել ի գիտություն, որ.

Ընթացակարգը կազմակեպվել է ՀՀ կառավարության 30.01.2015թ. N 105-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 84-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները համաձայն՝

01.02.2016թվականին <<ՇՄԳԼԲԿ-ՇՀԱՊՁԲ 15/1-16/1>> ծածկագրով ՇՀ միջոցով կայացած վառելիքի գնման ընթացակարգի արդյունքում , «ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ 12.02.2016թ. N <<ՇՄԳԼԲԿ-ՇՀԱՊՁԲ 15/1-16/1>> կնքված պայմանագրի նկատմամբ: Այն է ՝շրջանակային համաձայնագրերի միջոցով ապրանքների գնման դեպքում պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը պատվիրատուն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա Կարգով սահմանված պահանջներով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով պատվիրատուն մեկ աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիր կնքած անձին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և կնքվելիք պայմանագրի փոփոխության նախագիծը: Եթե մասնակիցը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի փոփոխությունը, ապա այդ մասով պատվիրատուն ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է նախկինում կնքված պայմանագիրը՝ առանց պայմանագրի կողմի նկատմամբ պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

ա/ Գնային առաջարկներ ներկայացրելու համար ՀՀ Շիրակի մարզի << Վ. Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն>> ՓԲԸ-ն հրավերի տեքստը , պայմանագրի նախագիծը և կից հավելվածները ուղարկել է apranq-15-1@shh.gnumner.am էլ. հասցեով , ինչպես նաև ներկայացրել է ՀՀ Շիրակի մարզպետարան gnumner.am պաշտոնական կայքում հրապարակելու համար:

բ/ Սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտեր/ գնային առաջարկներ/ <<ԳԱԿ- ՇՀԱՊՁԲ-15/1>> ընթացակարգով շրջանակային համաձայնագիր կնքած կազմակերպությունները կողմից չեն ներկայացվել :

գ/ Հրավերով սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման պայմաններին չհամապատասխանող հայտ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ 3 կողմ – , 0 դեմ – :

## 2. Հայտերի վերաբերյալ հարցումների և ներկայացված պարզաբանումների մասին

-------------- Սարգիս Կարապետյան -------------------

(նախագահի անուն, ազգանուն)

Հարցումներ չեն եղել :

## 3. Ներկայացված բողոքների և դրանց վերաբերյալ կայացված որոշումների մասին

---------------- Սարգիս Կարապետյան ------------------

(նախագահի անուն, ազգանուն)

Բողոքներ չեն եղել :

## 4.«ՇՄԳԼԲԿ- ՇՀԱՊՁԲ-15/1-16/1/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրով վառելիքի /բենզին ռեգուլյար/ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը քննարկեց և որոշեց

ա/ Ընթացակարգը հայտարարել չկայացած՝ “Գնումների մասին” ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն / Առաջարկ չի ներկայացվել/

բ / Շարունակել ՝ «ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ 12.02.2016թ. <<ՇՄԳԼԲԿ-ՇՀԱՊՁԲ 15/1-16/1>> կնքված պայմանագիրը:

Ընդունվել է որոշում՝ 3 կողմ – , 0 դեմ – :

Հանձնաժողովի նախագահ ՝ Սարգիս Կարապետյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ռուզան Մովսիսյան

Լիլիթ Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Թամարա Գաբրիելյան